ՀՏԴ 342.417

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստենախոսության թեմա՝
Սահմանադրականության գնահատման տնտեսագիտական հիմնահարցերը (ՀՀ տնտեսության օրինակով)

Գիտական ղեկավար՝
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ժիրայր ՄԽԻԹԱՐՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի ասպիրանտ

Բանալի բառեր՝
սահմանադրական տնտեսագիտություն, կանոններ, առարկա, ուղղություններ, սահմանադրականություն:

Վերջին տասնամյակների համաշխարհային գիտական զարգացումներն առանձնացան միջառարկայական կապերի զգալի խորացմամբ՝ հանգեցնելով գիտա-կրթական նոր ուղղությունների առաջացման, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի սահմանադրական տնտեսագիտությունը: Վերջինս ձեւավորվել է նախորդ դարի երկրորդ կեսերին, իսկ նրա հիմնադիրը՝ Տեյմս Բյուքենենը «տնտեսական եւ քաղաքական որոշումների կայացման տեսության սահմանադրական եւ պայմանագրային հիմքերի ձեւավորման համար» արժանացել է Նոբելյան մրցանակի[1]:

Սահմանադրական տնտեսագիտությունը լայն իմաստով դասական տնտեսագիտության առավել ընդհանուր վերածմնդի բաղկացուցիչ տարրերից մեկն է: Այն համարվում է Ադամ Սմիթի «Օրենսդրության գիտության» ժամանակակից կրկնորդը. գիտության մի ուղղություն, որը ձգտում է կրկին իրար մոտեցնել տնտեսագիտությունը, իրավագիտությունը, քաղաքագիտությունը եւ փիլիսոփայությունը, որոնք «Բարոյական փիլիսոփայություն» գիտության մաս էին կազմում:

Ըստ Բյուքենենի. **«սահմանադրական տնտեսագիտությունն ուսումնասիրում է կանոնների (սահմանադրական) գործող հատկությունները, ինստիտուտները, որոնց շրջանակներում անհատները փոխազդում են եւ այն գործընթացները, որոնց միջոցով այդ կանոններն ու ինստիտուտները ծագում եւ ընտրվում են»**[2]: Մեկ այլ բնորոշման համաձայն, սահմանադրական տնտեսագիտությունը գիտական ուղղություն է, որը **«փորձում է բացատրել իրավական - ինստիտուցիոնալ - սահմանադրական կանոնների այլընտրանքային համակցությունների գործող հատկությունները, որոնք սահմանափակում են տնտեսական եւ քաղաքական գործիքների ընտրությունն ու գործունեությունը»**[3]:

Պետք է նշել, որ «սահմանադրություն» եզրն անգլերենում ունի շատ ավելի լայն իմաստ, քան հայերենում՝ պայմանավորելով սահմանադրական տնտեսագիտություն հասկացության իմաստաբանական տարբերությունների ձեւավորումը:

Հայերեն «սահմանադրություն» բառը կազմված է «սահման» եւ «դիր» արմատներից եւ բառացիորեն նշանակում է **սահմաններ դնել**: Նոր հայկազյան բառարանը տալիս է սահմանադրության բավական ուշագրավ բնորոշում՝ ներկայացնելով այն, որպես **«Որոշումն սահմանաց եւ Տեսչութիւն վերին»**[4]: Այսպիսի սահմանումը լուրջ բովանդակային ընդգրկում ունի եւ ներառում է հետեւյալ կարեւոր բնութագրիչ տարրերը՝ ա) դա որոշում է, վճիռ է, «օրինադրութիւն» է, բ) այն ունի սահմանային նշանակություն. իրենիցգերակա «որոշում» լինել չի կարող, գ) «Տեսչութիւն վերին» արտահայտությունը, փոխլրացնելով նման որոշման սահմանային ու գերակա բնույթը, հատուկ ընդգծում է դրա հիմքում ընկած անփոփոխելի «ի վերուստ տրված» արժեքների առկայությունը[5]:

Ժամանակակից հայերենի հանրագիտական բառարաններում սահմանադրության բնորոշումը գրեթե միարժեք է: Որպես սահմանադրության հիմնական նշանակություն տրվում է **«պետության հիմնական օրենք»** բնորոշումը: Որպես երկրորդային բնորոշումներ նշվում են նաեւ «սահմանված կարգ» եւ «սահմաններ դնելը» նշանակությունները[6]: Եթե սրան հավելենք, որ արդի հայերենում սահմանադրություն բառը կիրառվում եւ հասարակության կողմից ընկալվում է միայն պետության հիմնական օրենք իմաստով, ապա պատկերն առավել կամբողջանա:

Սակայն պատկերն այլ է ժամանակակից անգլերենում, որտեղ սահմանադրություն հասկացությունը շատ ավելի ընդգրկուն է եւ գործնականում կիրառվում է իմաստային մի շարք նշանակություններով: Նշենք դրանցից մի քանիսը. 1) հիմնարար սկզբունքների կամ հաստատված նախադեպերի ամբողջություն, որոնց համաձայն կառավարվում է *պետությունը կամ այլ կազմակերպական կառուցվածք*[7], 2) քաղաքական սկզբունքների ամբողջություն, որոնց համաձայն, պետությունը կամ կազմակերպությունը կառավարվում է՝ հատկապես իր կողմից կառավարվող մարդկանց իրավունքների առնչությամբ[8], 3) պետության, *ազգի կամ սոցիալական խմբի* հիմնարար սկզբունքների ամբողջություն, որով սահմանվում են դրանց կառավարման մարմինների լիազորություններն ու պարտականությունները եւ երաշխավորվում ընդգրկված անձանց որոշակի իրավունքներ[9]:

Այս բնորոշումներից հատկապես պետք է առանձնացնել այն հանգամանքը, որ սահմանադրություն եզրը կիրառվում է համանման իմաստով ոչ միայն պետության, այլեւ՝ տարբեր կազմակերպական կառուցվածքների՝ ընկերությունների, հասարակական կազմակերպությունների (հիմնադիր փաստաթղթի՝ կանոնադրության իմաստով), սոցիալական խմբերի նկատմամբ եւ այլն: Հենց այս իմաստային հենքի վրա են կառուցված վերոնշյալ սահմանումները, ինչպես նաեւ ընդհանուր առմամբ՝ ողջ արեւմտյան սահմանադրական տնտեսագիտության տեսությունը: Մենք կօգտագործենք այն միայն պետության հիմնական օրենք նշանակությամբ, ինչպես դա ընկալվում եւ կիրառվում է ժամանակակից հայերենում:

Այս իմաստով առավել ընդունելի է լայնորեն ճանաչված հետեւյալ սահմանումը. **սահմանադրական տնտեսագիտու-**

Սահմանադրականության ընահատման սխեմատիկ ներկայացումը



թյունը գիտության ուղղություն է, որն ուսումնասիրում է ազգային տնտեսական համակարգի շրջանակներում անհատի տնտեսական եւ սոցիալական իրավունքների առավելագույն հնարավոր բավարարման հնարավորությունները՝ տնտեսական նպատակահարմարությունը սահմանադրական զարգացման առկա մակարդակի հետ (որն արտացոլվում է պետության մեջ տնտեսական եւ քաղաքական գործունեությունը կանոնակարգող սահմանադրական իրավունքի նորմերում) օպտիմալ համակցման ճանապարհով[15]:

Այս սահմանումն արտացոլում է համընդհանուր համոզմունքն առ այն, որ տնտեսության պետական կարգավորման հիմնախնդիրների լուծումը պետք է գտնել ելնելով ոչ միայն տնտեսական նպատակահարմարությունից, այլեւ՝ պետության սահմանադրական կառուցվածքի իրողություններից[16]:

Սահմանադրական տնտեսագիտության առարկայական տիրույթի սահմաններն առավել լիարժեքորեն բնութագրելու համար անհրաժեշտ է բացահայտել այն բաժանման գիծը, որով սահմանազատվում է սահմանադրական տնտեսագիտությունը:

Տնտեսագիտության մեջ առանցքային տեղ է զբաղեցնում նաեւ ընտրության հիմնախնդիրը, ինչը հիմք է հանդիսանում երբեմն այն անվանելու գիտություն ընտրության մասին: Ոչ սահմանադրական տնտեսագիտությունում վերլուծությունները կենտրոնանում են *առկա սահմանափակումների **շրջանակներում** ընտրության կատարման* վրա:Սահմանադրական տնտեսագիտությունն ուղղորդում է վերլուծությունը դեպի *սահմանափակումների **միջեւ** ընտրության կատարումը*՝ [17] այդպիսով ներկայացնելով քննության «ավելի բարձր» մակարդակ:

Սահմանադրական տնտեսագիտությունը ներառում է տնտեսագիտության եւ իրավունքի տարրեր: Այսպես, պետությունը, քաղաքացիներն ու ընկերությունները մշտապես փոխգործակցում են, որի պարագայում մասնակիցներից յուրաքանչյուրը հետապնդում է իր նպատակներն ու ունի իր շահերը: Այդ նպատակները, շահերը, ինչպես նաեւ դրանց հասնելու մեթոդներն ու միջոցները շատ դեպքերում իրարից տարբերվում են եւ նույնիսկ՝ հակադրվում: Այդ իսկ պատճառով, բոլոր այդ գործողությունների կանոնակարգման համար սահմանվում են համապատասխան իրավական նորմեր: Այսպիսով, իրավական նորմերը հանդիսանում են տնտեսական հարաբերությունների մասնակիցների գործողությունների համաձայնեցման հիմքը, որոնց մեջ ելակետային եւ կենտրոնական տեղ է զբաղեցնում սահմանադրական իրավունքը[18]: Տնտեսական զարգացումը նոր մարտահրավերներ է առաջադրում ավանդական սահմանադրական իրավունքի առջեւ, որոնց պատշաճ արձագանք կարող է տալ միայն սահմանադրական տնտեսագիտությունը[19]:

Իրավաբանները հազվադեպ են անդրադառնում այս ոլորտին, ինչն ոչ միայն զսպում է գիտության այս ուղղության զարգացումը, այլեւ հաճախ հանգեցնում է մակերեսային կամ միակողմանի դատողությունների առաջացման[19]: Այս կողմից, տնտեսագետները ծավալելով տարատեսակ տնտեսագիտական հասկացությունների եւ տնտեսական երեւույթների շուրջ քննարկումներ, հիմնականում չեն դիտարկում սահմանադրական սկզբունքներն ու նորմերը, որպես հիմնախնդիրների լուծման նախապայման: Տարբեր մակարդակների իշխանավորների մոտ առկա չէ խոր իրավական պահանջ, որպեսզի նրանք տարեկան, միջնաժամկետ եւ երկարաժամկետ ժամանակահատվածներին վերաբերող տնտեսական որոշումներ կայացնելիս պարտավորված լինեն հետեւել Սահմանադրության մեջ ուղղակիորեն ամրագրված նորմերին, ինչպես նաեւ սահմանադրական սկզբունքներին, որոնք ուղղակիորեն արտացոլված չեն Սահմանադրության տեքստում, սակայն երկարաժամկետ հատվածում ապահովում են քաղաքացիների ու հասարակության սոցիալական, տնտեսական եւ այլ իրավունքները[19]:

Սահմանադրական տնտեսագիտության հիմնախնդիրների ուսումնասիրման *հասնելիո մոտեցումն* ունի գործնականորեն մեծ նշանակություն, քանզի այն թույլ է տալիս հաղթահարել իրավաբանների կողմից տնտեսագիտության հիմնահարցերի ավանդական չիմացությունը, իսկ տնտեսագետների կողմից՝ իրավունքի եւ հատկապես սահմանադրական իրավունքի հիմնահարցերի չիմացությունը[17]:Սահմանադրական տնտեսագիտության շրջանակներում տնտեսագետներն ու իրավաբանները փորձում են միավորել իրենց ջանքերը՝ պարզելու, թե ինչպես կարող է սահմանադրական իրավունքն ազդել կարեւորագույն ռազմավարական տնտեսական որոշումների կայացման վրա, որոնք կազմում են պետության տնտեսական քաղաքականության էությունը[19]: Խոսքը գնում է ոչ միայն տնտեսագիտական եւ իրավագիտական փոխլրացնող վերլուծության իրականացման, այլեւ դրանց մասնակի միաձուլման մասին՝ ինչպես տեսության մեջ, այնպես եվ գործնականում, ինչն իրենից ներկայացնում է մեթոդաբանական միավորում դրանց փաստացի հակասությունների վերացման նպատակով[19]: Ինչպես նշել է հայտնի իրավաբան, ակադեմիկոս Օլեգ Կուտաֆինը. սահմանադրական տնտեսագիտությունը «հնարավորություն է տալիս նայել տնտեսագիտության ու իրավունքի հիմնախնդիրներին մեկ ամբողջության մեջ եւ հասկանալ, որ նրանք անբաժանելիորեն կապված են իրար հետ ու շատ առումներով կանխորոշում են մեկը մյուսի զարգացումը»[20]: Այսպիսով, սահմանադրական տնտեսագիտությունը պահանջում է բազմագործոն տնտեսական ռազմավարություն երկրի ներսում եւ դրա սահմաններից դուրս, այլ ոչ թե պարզապես իրավիճակային ու հաճախ պատահական տնտեսական որոշումներ՝ հիմնված միայն կարճաժամկետ օգուտների վրա, որոնք հաճախ չեն համընկնում երկրի ռազմավարական տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների եւ քաղաքացիների բարեկեցության անընդհատ բարձրացման նպատակի հետ:

Ատենախոսության թեմա՝
Սահմանադրական տնտեսագիտության արդի զարգացումներն ու կառավարման հիմնահարցերը

Գիտական ղեկավար՝
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Սեդա
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի ասպիրանտ

Ամփոփելով, կարող ենք համաձայնել այն տեսակետի հետ, ըստ որի՝ սահմանադրական տնտեսագիտությունն իրենից ներկայացնում է տնտեսական զարգացման եւ երկրի քաղաքացիների նյութական բարեկեցության բարձրացման գծով պետության տնտեսական գործունեության ինստիտուցիոնալ-նորմատիվ ապահովման հիմնախնդիրների նկատմամբ սահմանադրական իրավունքի կիրառման հարցերի փոխկապվածությունների համալիր համատեղ ուսումնասիրություն տնտեսագետների ու իրավաբանների կողմից[21]:

Կարեւորվում են սահմանադրական տնտեսագիտության ուղղությունները, ըստ որոնց տարբերակվում են երեք լայն ճյուղեր՝ նորմատիվ, պոզիտիվ եւ էմպիրիկ:

Նորմատիվ սահմանադրական տնտեսագիտությունը կենտրոնանում է պետության եւ նրա ներկայացուցիչների գործողությունների օրինականացման վրա: Այլ կերպ՝ այն ուղղված է պայմանների բացահայտմանը, որոնց պահպանման դեպքում կոլեկտիվ ընտրությունների ելքային արդյունքները կարող են համարվել «արդարացի» եւ «արդյունավետ»: Այս ուղղությունը կենտրոնանում է կանոնների Պարետո-արդյունավետ փոփոխությունների առաջադրման վրա եւ ուսումնասիրում է տարբեր հարցեր, ինչպիսիք են՝ ինչպե՞ս պետք է հասարակություններն առաջ ընթանան, որպեսզի ձեւավորվեն այնպիսի սահմանադրական կանոններ, որոնք կբավարարեն որոշակի չափանիշների, ինչպիսի՞ բովանդակություն պետք է ունենան սահմանադրական կանոնները, ո՞ր հիմնահարցերը պետք է կարգավորվեն սահմանադրության շրջանակներում եւ որո՞նք պետք է թողնվեն հետսահմանադրական ընտրության փուլում, ինչպիսի՞ բնութագրական գծեր պետք է ունենան սահմանադրական կանոններն եւ այլն:

Բյուքենենը չի պատասխանում այս հարցերից եւ ոչ մեկին, սակայն առաջարկում է այնպիսի գաղափարական կառուցվածք, որի միջոցով հնարավոր կլինի պատասխանել դրանց: Որոշ գիտնականներ կասկածի տակ են դնում նորմատիվ տեսության պատշաճությունը[22] նշելով, որ «խիստ կասկածելի է, թե արդյո՞ք նման վերլուծությունը կարող է ստեղծել շոշափելի տարբերություն գործող ինստիտուտների բնույթում: Մեզ համար նորմատիվ տեսությունն օգտակար է մեր նորմերի պարզաբանման համար, սակայն այլ հարց է, թե արդյո՞ք նման վերլուծությունը կնպաստի իրական ինստիտուցիոնալ զարգացմանը»: Վերոնշյալ մասնագետները տեսնում են պոզիտիվ սահմանադրական տնտեսագիտության ուսումնասիրման անհրաժեշտությունն իրենց բարձրացրած հարցի լուծման համար:

Պոզիտիվ սահմանադրական տնտեսագիտությունը կենտրոնանում է սահմանադրական կանոնների ընտրության՝ դրանց առաջացման ու փոփոխման, ինչպես նաեւ դրանց հետեւանքների (տնտեսական) բացատրության վրա: Այն բաժանվում է չորս ուղղությունների. ա) սահմանադրական կանոնները վերլուծվում են, որպես դրանց առաջացմանը հանգեցնող որոշակի *գործընթացների արդյունք*, բ) սահմանադրական կանոնները վերլուծվում են, որպես *գործոնների կամ դրանց խմբերի արդյունք*, որոնք հանգեցնում են սահմանադրական կանոնների ընտրությանը, գ) վերոնշյալ երկու ուղղությունները ներկայացնում են ստատիկ մոտեցում պոզիտիվ տեսության նկատմամբ: Հաջորդ ուղղությունը նվիրված է առավել դինամիկ վերլուծությունների, այսինքն՝ ըստ որոնց, որոնք բացատրվում են սահմանադրության փոփոխությունները ժամանակի ընթացքում, դ) չորրորդ ուղղությունն ուղղված է սահմանադրական (այլընտրանքային) կանոնների (տնտեսական) *հետեւանքների* բացատրությանը[23]:

Էմպիրիկ սահմանադրական տնտեսագիտությունը լայն առումով հետաքրքրված է երկու հարցերում.ինչպիսի՞ կարեւոր տնտեսական հետեւանքներ ունեն սահմանադրական կանոնները, ինչու՞ են առանձին երկրներ ընտրում տարբեր սահմանադրություններ: Էմպիրիկ սահմանադրական տնտեսագիտության հիմնական տարբերությունը դրա այլ ուղղություններից կայանում է սահմանադրա-տնտեսագիտական վերլուծություններում տնտեսագիտա-մաթեմատիկական գործիքակազմի ակտիվ գործածության մեջ:

Ուսումնասիրությունների էմպիրիկ բազայի առկայությունը հնարավորություն է ստեղծում առաջարկել եւ լուծել առանձին երկրների «ճանաչման» ամենատարբեր խնդիրներ: Երկրները դասակարգելու ու տարբերակելու փորձերը ներկայումս ունեն գործածական հետեւյալ բնորոշումները. զարգացած, զարգացող, նորանկախ, անցումային, ռեսուրսակախված, կոռումպացված, օլիգարխիկ, վերջին շրջանում նաեւ «եռյակ» եւ այլն: Երկրների կամ դրանց խմբերի նմանատիպ բնորոշումները հետազոտական առումով շատ դեպքերում պարզունակ են, քանի որ նման դասակարգման հիմքում դրված է ոչ թե երկրի հնարավորինս համալիր բնորոշման հայտանիշների համախումբ, այլ՝ միակողմանի բնութագիր: Պատահական չէ, որ «հասարակական բարեկեցություն», «մարդկային զարգացում» եւ այլ եզրերը, ի տարբերություն նախորդ դասակարգման, բնութագրվում են բազմաթիվ հայտանիշների համախմբով: Սոցիալ-տնտեսական համակարգերում իրավիճակի նկարագրման ու փոփոխման առանձնահատուկ բնութագրերը արտահայտվում են սոցիալ-տնտեսական ինդիկատորների (ՍՏԻ) միջոցով:

Նորանկախ երկրների զարգացման բնութագրական ցուցանիշներից մեկը առժամանակ համարվում էր սոսկ տնտեսական աճի, այլ ոչ թե տնտեսական զարգացման ցուցանիշը: Այս ցուցանիշը վերջին շրջանում քննադատության է ենթարկվում, որը պայմանավորված է, մասնավորապես, սոցիալական հակասությունների սրմամբ: Տնտեսական զարգացումը օբյեկտիվորեն թելադրում է հասարակական զարգացման գործոնների նոր ընտրանու՝ սոցիալ-տնտեսական ինդիկատորների կիրարկման անհրաժեշտությունը:

Հատկանշական է այն փաստը, որ հասարակական հարաբերություններին վերաբերող առաջին համակարգային հետազոտությունները համաշխարհային մակարդակում իրականացվել են տարաբնույթ ՍՏԻ-ների միջոցով: «Աճի սահմանները» նախագծի շրջանակում համաշխարհային զարգացման դրական մեկնաբանության նկարագիրը Ջ. Ֆորեստերի եւ Դ. Մեդոուզի կողմից մշակված եւ հետագայում ձեւափոխված մոդելների միջոցով պահպանում է իր արդիականությունը[24]:

Հիշատակված աշխատանքում դիտարկելով 1900-1970թթ. ժամանակահատվածը մոդելավորվել ու հաշվարկվել են հետեւյալ մեծությունների շարժընթացը՝ չվերականգնվող ռեսուրսներ, սննդամթերքի արտադրություն, բնակչության թվաքանակ,մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանք, շրջակա միջավայրի աղտոտում, մահացության ընդհանուր տեմպ, ծնելիության ընդհանուր տեմպ,մեկ շնչի հաշվով ծառայությունների արտադրություն:

Կանխատեսումային մոդելավորման մեթոդներով, տարբեր սցենարների դիտարկմամբ, նկարագրվել են վերոնշյալ ՍՏԻ-ներով ներկայացված ցուցանիշների վարքագիծը եւ կատարվել են պատմատեսականից մինչեւ չափավոր լավատեսական եզրահանգումներ:

Վերլուծության մեկ այլ օրինակը, որը վերաբերում է ամերիկյան քաղաքագետ Գ. Մորգենթաուի կողմից ներմուծված «ազգային ուժի» ՍՏԻ-ների ձեւավորմանը, ներառում է հետեւյալ տարրերը՝ աշխարհագրական գործոնը, արտադրական հզորությունները, բնական ռեսուրսները, ռազմական պատրաստվածությունը, բնակչությունը, ազգի բարոյական ոգին եւ այլն[25]:

Սոցիալ-տնտեսական զարգացումների տեսական ընդհանրացումները եւ այդ հիմքի վրա միջերկրային համեմատությունների քանակական ու որակական գնահատումները դեռեւս բավարար կիրառական արտացոլում չեն գտնում, որի արգելապատնեշների թվում են՝ ա) իրական վիճակագրական բազայի եւ դրա հիման վրա կառուցված միտումների աղճատվածությունը, բ) իրավիճակի փոփոխությունը նկարագրող առավել լրիվ եւ համընդգրկուն ինտեգրալ չափանիշների մշակումը:

Այդուհանդերձ, սոցիալ-տնտեսական իրավիճակի համարժեք բացահայտման լուծումներն իրենց կենսունակությունը կարող են դրսեւորել, եթե դիտարկվում են իրավիճակը բնութագրող հայտանիշների փոխկապակցված գործոնների հա-

մախմբով ձեւավորվող տարաբնույթ «անհարթությունների» դիտարկումը համակարգերի փոխգործակցման համատեքստում (տես՝ գծապատկերը):

Պարզաբանենք «անհարթությունների» խորության արտահայտությունը, որով էմպիրիկ հետազոտությունների ժամանակ կարող է գնահատվել սահմանադրականության աստիճանը: Այս իմաստով տեղին է մեջբերել իսլանդացի տնտեսագետ Թրայն Էգերթսոնի «Քոուզի թեորեմի ընդհանրացումը», ըստ որի՝ «տնտեսական աճը եւ երկրի զարգացումը հիմնականում կախված չեն գոյություն ունեցող կառավարության տիպից, եթե գործարքային ծախսերը տնտեսական ու քաղաքական ասպարեզում հավասար են զրոյի: Սակայն եթե գործարքային ծախսերը դրական են, ապա իշխանության բաշխումը երկրի ներսում եւ նրա իրավաստեղծ կազմակերպությունների ինստիտուցիոնալ կառուցվածքը հանդիսանում են նրա զարգացման կարեւորագույն գործոնը»:

Նոր ինստիտուցիոնալիզմի դրույթներին առանձնապես չխրազեկվածների համար նշենք, որ գործարքային ծախսերը, այլ կերպ՝ գործառնական վերադիր ծախսերը կամ փոխաբերական իմաստով՝ շփման ուժի հաղթահարման ծախսերը տնտեսական եւ քաղաքական ոլորտներում ունեն մի շարք բաղադրիչներ: Դրանք առաջանում են շուկայում (շուկայական գործարքային ծախսեր), կազմակերպություններում (կառավարչական ծախսեր) եւ կառավարության մակարդակում (քաղաքական գործարքային ծախսեր)[26]:

Էմպիրիկ սահմանադրական տնտեսագիտությունը զարգացման մեծ թափ ստացավ Թ. Փերսոնի եւ Գ. Թաբելինիի «Սահմանադրությունների տնտեսական հետեւանքները» աշխատության հրատարակումից հետո: Հեղինակները գլխավորապես կենտրոնացել են երկու գործոնների հետեւանքների վերլուծության վրա՝ պետական կառավարման ձեւի եւ ընտրական կանոնների: Նրանք ի թիվս բազմաթիվ եզրակացությունների գտնում են, որ կառավարման խորհրդարանական ձեւը՝ հիմնված համամասնական ընտրակարգի վրա կապված է կենտրոնական կառավարության ծախսերի հետ, որոնք ՀՆԱ-ի 10%-ով ավելին են, քան նախագահական կառավարմամբ, մեծամասնական ընտրակարգով պետություններում: Դա նշանակում է, որ Հունաստանը կարող է լուծել իր ինկայական ֆինանսական խնդիրներն ընդամենը անցում կատարելով համամասնա-խորհրդարանական համակարգից մեծամասնա-նախագահականի[27]:

Ներկայացվել է 15.10.2014թ.
Ընդունվել է տպագրության 24.10.2014թ.

1. Տես՝ Նոբելյան մրցանակի պաշտոնական կայք-էջը՝ http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1986/buchanan-facts.html:
2. Buchanan James M., The Domain of Constitutional Economics, Constitutional Political Economy, Vol. 1, N1, 1990, p. 1.
3. Van den Hauwe Ludwig, Constitutional economics, The Elgar companion to law and economics, second edition, Edited by Jurgen G. Backhaus, Edward Elgar Publishing, 2005, p. 223-224.
4. Տես՝ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Տպագրեալ ի Սուրբ Ղազարու, Վենետիկ, 1837, հատոր 2, էջ 688
5. Տես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր.: Իրավունք, 2010, էջ 9
6. Տես՝ Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր.: «Հայաստան» հրատ., 1976, հատոր 2, էջ 1271, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, հատոր 4, էջ 263:
7. Տես՝ Օքսֆորդի բառարան http://www.oxforddictionaries.com/definition/english/constitution:
8. Տես՝ Քեմբրիջի բառարան http://www.dictionary.cambridge.org/dictionary/british/constitution_1:
9. Տես՝ Մերիամ-Վեբսթեր բառարան, Բրիտանիկա հանրագիտարան http://www.merriam-webster.com/dictionary/constitution:
10. Лафитский В.И., Мау В.А., Конституционная экономика и основы экономического положения личности, Очерки Конституционной Экономики, 23 октября, 2009, Ответственный редактор Г.А. Гаджиев, М.: Юстицинформ, 2009, с. 92, Мишин А.А., Конституционное (государственное) право зарубежных стран, Учебник для вузов, 17-е изд., М.: Статут, 2013, USLegal ամսամատյանի կայք-էջը http://www.definitions.uslegal.com/c/constitutional-economics, Конституционная экономика, Отв. ред. Г.А. Гаджиев, М.: Юстицинформ, 2010, с. 11.
11. Баренбойм П.Д., Соотношение доктрин Верховенства права и Правового государства как главный вопрос философии права и конституционализма, М.: ЛУМ, 2013, с. 90.
12. Buchanan James M., The Domain of Constitutional Economics, Constitutional Political Economy, Vol. 1, No. 1, 1990, p. 2-3.
13. Баренбойм П.Д., Лафитский В.И., Мау В.А., Захаров А.В., Меркулова Н.Ю., Конституционная экономика для школ, Учебное пособие, М.: Юстицинформ, 2006, с. 4-5.
14. Баренбойм П.Д., Соотношение доктрин Верховенства права и Правового государства как главный вопрос философии права и конституционализма, М.: ЛУМ, 2013, с. 91.
15. Конституционная экономика, Отв. ред. Г.А. Гаджиев, М.: Юстицинформ, 2010, с. 11.
16. Barenboim P., Merkulova N., 25th Anniversary of Constitutional Economics: The Russian Model and Legal Reform in Russia, The World Rule of Law Movement and Russian Legal Reform, M: Justitsinform, 2007, p. 181.
17. Конституционная экономика, Отв. ред. Г.А. Гаджиев, М.: Юстицинформ, 2010, с. 11.
18. Конституционная экономика, Отв. ред. Г.А. Гаджиев, М.: Юстицинформ, 2010, с. 3.
19. Barenboim P., Merkulova N., 25th Anniversary of Constitutional Economics: The Russian Model and Legal Reform in Russia, The World Rule of Law Movement and Russian Legal Reform, M: Justitsinform, 2007, p. 182.
20. Баренбойм П.Д., Лафитский В.И., Мау В.А., Захаров А.В., Меркулова Н.Ю., Конституционная экономика для школ, Учебное пособие, М.: Юстицинформ, 2006, с. 2.
21. Баренбойм П.Д., Соотношение доктрин Верховенства права и Правового государства как главный вопрос философии права и конституционализма, М.: ЛУМ, 2013, с. 85, 100.
22. McCormick R., Tollison R., Politicians, legislation, and the economy, An inquiry into the interest-group theory of government, Boston: Nijhoff, 1981, p. 126.
23. Voigt Stefan, Positive Constitutional Economics: A Survey, Public Choice, Vol. 90, No. 1/4, Constitutional Political Economy, Mar., 1997, p. 11-47, Voigt Stefan, Constitutional Law, Encyclopedia of Law & Economics, General Editors: BoudewijnBouckaert and Gerrit De Geest. Publishers: Edward Elgar and the University of Ghent, 1999, p. 529-640, Voigt Stefan, Positive Constitutional Economics II, A Survey of Recent Developments, Public Choice, Vol. 146, Issue 1-2, Jan., 2011, p. 205-206.
24. Медоуз Д.Х., Медоуз Д.Л., Рандерс И., За пределами роста, М.: Прогресс-Пангея, 1994.
25. Morgenthau Hans J., Politics Among Nations, The Struggle for Power A. Knopf. New York, 1955.
26. Սարգսյան Հ., Սարկիսյան Ա., Հայաստանի տնտեսության վերափոխումները եւ վերելքի հեռանկարները, Ընդլայնված ամփոփում, Եր.: «Զանգակ», 2014, էջ 70
27. Persson, Torsten, and Tabellini Guido, The Economic Effects of Constitutions, Cambridge, MA: MIT Press, 2003, Voigt, Stefan, Empirical Constitutional Economics: Onward and Upward?, Journal of Economic Behavior & Organization, Vol. 80, Issue 2, 2011, p. 319-330.